Հավելված N 9
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 17-ի N 534 - Ն որոշման

ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ, ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՄՈՏ ԱՌԿԱ ԹԱՓՈՒՐ ԵՎ ՆՈՐ ՍՏԵՂԾՎՈՂ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ, ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎՆ ՈՒ ԵՂԱՆԱԿԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը կարգավորում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության (այսուհետ՝ գործակալություն) տարածքային կենտրոնների հետ (այսուհետ՝ տարածքային կենտրոն) գործատուների համագործակցության նպատակը, սկզբունքները, կազմակերպման և իրականացման քայլերը, մեթոդներն ու ընթացակարգերը, գործատուների հետ համագործակցության ընթացքում անհրաժեշտ տեղեկությունների տրամադրման, ստացման և գրանցման եղանակներն ու ձևերը, գործատուների հետ համագործակցության հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով՝ գործատուների հետ համագործակցությունը նախատեսում է զբաղվածության պետական կարգավորման շրջանակներում գործատուների և տարածքային կենտրոնի միջև փոխշահավետ ու մշտական հարաբերությունների հաստատում, հետևողական ընդլայնում, խորացում, հետադարձ կապի ապահովում և այդ հենքի վրա բնակչության զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի շրջանակներում (այսուհետ՝ ամենամյա ծրագիր) իրականացվող զբաղվածության պետական ծրագրերի (այսուհետ՝ ծրագիր) նպատակայնության և արդյունավետության թիրախավորված բարձրացում:

3. Ամենամյա ծրագրին համապատասխան՝ յուրաքանչյուր տարի՝ մինչև նախորդ տարվա դեկտեմբերի 25-ը գործակալության պետը կազմում է գործատուների հետ համագործակցության տվյալ տարվա ծրագիրը՝ համապատասխան թիրախավորմամբ:

4. Տարածքային կենտրոնի գործունեության տարածքում տնտեսավարող գործատուների հետ համագործակցության իրականացումը վերապահվում է տարածքային կենտրոնի աշխատողներից՝ գործակալության պետի հրամանով առանձնացված մասնագետին (մասնագետներին) (այսուհետ՝ զբաղվածության գործակալ):

5. Սույն կարգի 12-րդ կետում նշված ծառայությունները տարածքային կենտրոնի կողմից գործատուներին մատուցվում են անվճար:

II. ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

6. Գործատուի հետ համագործակցության հիմնական նպատակներն են՝

1) ապահովել աշխատանք փնտրող անձանց կայուն զբաղվածության ցուցանիշի թիրախավորված աճը.

2) ապահովել աշխատանք փնտրող անձանց տարածքային կենտրոնի կողմից ամենամյա ծրագրի շրջանակներում մատուցված ծառայությունների արդյունքների մասին հետադարձ տեղեկատվության ստացումը գործատուներից, այդ տեղեկատվության օբյեկտիվ վերլուծության արդյունքներով՝ ծրագրերի արդյունավետությունը, ինչպես նաև ոչ նպատակային օգտագործված ֆինանսական միջոցների վերադարձման գործընթացները.

3) ներկայացնել ծրագրերի հաջորդ տարվա պլանավորման վերաբերյալ առաջարկություններ, որոնք բխում են տարածքի աշխատաշուկայի օբյեկտիվ իրավիճակից.

4) հետևողականորեն ավելացնել զբաղվածության պետական կարգավորման շրջանակներում տարածքային կենտրոնի հետ համագործակցող գործատուների թիվը.

5) ապահովել գործատուների մոտ առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի մասին տեղեկատվությունը տարածքային կենտրոնի կողմից հավաքագրման ամբողջական հնարավորությունների գործնական կիրառությունն ու արդյունավետությունը, ինչպես նաև այդ գործընթացների հաշվետվողականությունը.

6) պարբերաբար ձեռք բերել անհրաժեշտ տեղեկություններ նոր գրանցված (հաշվառված) գործատուների և նրանց կողմից ներկայացվող աշխատուժի պահանջարկի մասին.

7) պարզել և վերլուծել աշխատատեղերի կրճատումների (առաջիկա մեկ տարվա ընթացքում), այդ թվում՝ զանգվածային ազատումների մասին տեղեկատվությունը, դրանց պատճառները, գործատուներին ներկայացնել աշխատատեղերի նախատեսվող կրճատումների հնարավոր կանխարգելման վերաբերյալ գործնական առաջարկություններ.

8) բարձրացնել գործատուների շրջանում ծրագրերի, ինչպես նաև տարածքի աշխատաշուկայի օբյեկտիվ իրավիճակի վերաբերյալ իրազեկվածությունը.

9) առավելագույնս հասցեական, նպատակային ու արդյունավետ դարձնել առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղը համալրելու նպատակով՝ աշխատանք փնտրող համապատասխան անձանց՝ տարածքային կենտրոնի կողմից գործատուի մոտ ուղեգրումը.

10) օժանդակել գործատուներին առկա և սպասվող թափուր աշխատատեղերն անհրաժեշտ աշխատողներով արդյունավետ համալրման գործում:

7. Գործատուների հետ համագործակցության հիմնական սկզբունքներն են՝

1) աշխատանքի կամավորությունը և աշխատուժի ազատ ընտրությունը.

2) սոցիալական գործընկերությունը.

3) կողմերի համար հարաբերությունների փոխշահավետությունը, կայունությունը և հետադարձ կապի ապահովումը.

4) ըստ առաջնահերթությունների՝ աշխատանք փնտրող անձանց պետական աջակցության և, որպես դրա վերջնական արդյունք, կայուն զբաղվածության ապահովումը.

5) աշխատաշուկայի պետական կարգավորման շրջանակներում տեղեկատվական համաչափության ապահովումը.

6) աշխատաշուկայի պետական կարգավորման շրջանակներում աշխատաշուկայի տարածքային օբյեկտիվ իրավիճակից բխող զարգացման միտումների հաշվառումը:

III. ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

8. Գործատուների հետ համագործակցությունն իրականացվում է հետևյալ կերպ՝

1) տարածքային կենտրոնի հետ որոշակի համագործակցություն ունեցող գործատուների վերաբերյալ նախարարության կողմից ձևավորված և վարվող համապատասխան տեղեկատվական համակարգում (այսուհետ՝ գործատուների գրանցամատյան) առկա տեղեկությունների ճշգրտում և հետագա համագործակցության հնարավորությունների, խնդիրների վերհանում.

2) տարածքային կենտրոնի հետ որոշակի համագործակցություն չունեցող և նոր գրանցված (հաշվառված) գործատուների մասին տեղեկատվության հավաքագրում.

3) գործատուի հետ կապի հաստատման՝ գործատուի համար առավել արդյունավետ եղանակի (եղանակների) ընտրություն և ըստ այդմ՝ կապի հաստատում.

4) գործատուին անհրաժեշտ՝ զբաղվածության պետական կարգավորման, ինչպես նաև տարածքային աշխատաշուկայի իրավիճակի մասին տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում.

5) գործատուից առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի, աշխատատեղերի հնարավոր կրճատումների ու զանգվածային ազատումների մասին տեղեկատվության պարբերաբար ստացում.

6) աշխատատեղերի հնարավոր կրճատումների և զանգվածային ազատումների պատճառների ճշտում գործատուից.

7) գործատուների մասին հավաքագրված ու գործատուներից ստացված և գործատուների գրանցամատյանում մուտքագրված տեղեկատվության պարբերաբար թարմացում.

8) սույն կետի 7-րդ ենթակետում նշված տեղեկատվության վերլուծություն՝ ըստ յուրաքանչյուր գործատուի.

9) սույն կետի 8-րդ ենթակետում նշված վերլուծության հիման վրա գործատուի հետ արդյունավետ համագործակցության ձևերի և հնարավորությունների համալիր գնահատում.

10) սույն կետի 9-րդ ենթակետում նշված գնահատման արդյունքների հիման վրա գործատուների հետ համագործակցության առաջնահերթությունների սահմանում.

11) գործատուների հետ համագործակցության վերաբերյալ կոնկրետ առաջարկության ձևավորում, այն գործատուին ներկայացնելը և գործատուների գրանցամատյանում դրա մասին համապատասխան նշում կատարելը.

12) սույն կետի 11-րդ ենթակետում նշված առաջարկության քննարկում գործատուի հետ և համապատասխանաբար՝

ա. վերջնական հստակեցում,

բ. իրականացման շուրջ կոնկրետ պայմանավորվածությունների ձեռքբերում.

13) սույն կետի 12-րդ ենթակետում նշված առաջարկության հիման վրա ձևավորված գործնական համագործակցության իրականացում՝

ա. զբաղվածության գործակալի կողմից նախապես ընտրված աշխատանք փնտրող անձին (անձանց)՝ աշխատանքի տեղավորման նպատակով ուղեգրում գործատուի

մոտ և գործատուների գրանցամատյանում դրա մասին համապատասխան նշում կատարելը, իսկ նման հնարավորության բացակայության դեպքում՝

բ. գործատուի մոտ առկա թափուր և (կամ) նոր ստեղծվող աշխատատեղերը տարածքային կենտրոնում հաշվառված՝ աշխատանք փնտրող անձով համալրելու նպատակով գործատուի, զբաղվածության գործակալի և աշխատանք փնտրող անձի միջև բանակցությունների վարման կազմակերպում և գործատուների գրանցամատյանում դրա մասին համապատասխան նշում կատարելը.

14) սույն կետի 13-րդ ենթակետի «բ» պարբերությունում նշված բանակցությունների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածություններին համապատասխան՝ ծրագրի մեկնարկում և գործատուների գրանցամատյանում դրա մասին համապատասխան նշում կատարելը.

15) աշխատատեղերի հնարավոր կրճատումները կանխարգելելու նպատակով գործատուի, զբաղվածության գործակալի և աշխատատեղերի կրճատման հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ գործատուից գրավոր ծանուցում ստացած աշխատողի (աշխատողների) միջև բանակցությունների վարման կազմակերպում, նշված բանակցությունների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածություններին համապատասխան՝ գործատուին առաջարկություններ ներկայացնելը և գործատուների գրանցամատյանում դրա մասին համապատասխան նշում կատարելը.

16) սույն կետի 13-րդ ենթակետի «ա» պարբերությունում նշված ուղեգրման արդյունքների մասին տեղեկատվության ստացում գործատուից և գործատուների գրանցամատյանում դրա մասին համապատասխան նշում կատարելը՝ հաշվառման նպատակով առանձնացնելով այն դեպքերը, երբ իրեն առաջարկվող հարմար աշխատանքից հրաժարվել է աշխատանք փնտրող անձը.

17) ծրագրի ավարտից հետո՝ իրականացման արդյունքների վերաբերյալ գործատուների գրանցամատյանում համապատասխան նշում կատարելը.

18) ծրագրի իրականացման, ինչպես նաև սույն կետի 13-րդ ենթակետի «ա» պարբերությունում նշված ուղեգրման արդյունքում գործատուի մոտ աշխատանքի տեղավորված՝ աշխատանք փնտրող անձի աշխատանքային հարաբերությունները շարունակելու, այդ շրջանակներում առկա խնդիրների մասին տեղեկատվության պարբերաբար ստացում գործատուից՝ դրանց մասին համապատասխան նշումներ կատարելով գործատուների գրանցամատյանում.

19) սույն կետի 15-րդ ենթակետում նշված՝ աշխատանքից ազատման իրական ռիսկ ունեցող աշխատողների աշխատանքային հարաբերությունները շարունակելու մասին տեղեկատվության պարբերաբար ստացում գործատուից և գործատուների գրանցամատյանում դրա մասին համապատասխան նշում կատարելը.

20) գործատուների հետ համագործակցության գործնական արդյունքների և հնարավորությունների համալիր վերլուծության արդյունքներով՝ այդ գործընթացների պլանավորման ու իրականացման արդյունավետության և հասցեականության բարձրացման վերաբերյալ առաջարկությունների մշակում:

IV. ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

9. Տարածքային կենտրոնի հետ համագործակցող գործատուների մասին տեղեկատվությունը հավաքագրվում, տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությունը ճշգրտվում և թարմացվում է սույն կարգով, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից (այսուհետ՝ նախարար) հաստատված՝ գործատուների գրանցամատյանի ձևաչափին համապատասխան:

10. Զբաղվածության գործակալը տարածքային կենտրոնի հետ որոշակի համագործակցություն չունեցող և (կամ) նոր գրանցված (հաշվառված) գործատուների մասին տեղեկատվությունը հավաքագրում է հետևյալ հիմնական աղբյուրներից և մուտքագրում գործատուների գրանցամատյանում՝

1) իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող կենտրոնից՝ առցանց եղանակով, շաբաթական կտրվածքով.

2) գործատու հանդիսացող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց ինտերնետային կայքէջերից՝ յուրաքանչյուր աշխատանքային օր կատարելով համապատասխան մշտադիտարկում.

3) տարածքային կենտրոնի հետ համագործակցող՝ աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպություններից՝ ամսական կտրվածքով և այդ կազմակերպությանն առավել հարմար եղանակով.

4) զանգվածային լրատվության միջոցներից և այլ հնարավոր աղբյուրներից՝ յուրաքանչյուր աշխատանքային օր կատարելով համապատասխան մշտադիտարկում:

11. Գործատուի հետ կապի հաստատման՝ սույն կետում նշված եղանակները նախապես քննարկվում են գործատուի հետ, և կատարվում է գործատուի համար առավել արդյունավետ եղանակի (եղանակների) համատեղ ընտրություն՝

1) զբաղվածության գործակալի կողմից գործատուին այցելություն.

2) գործատուի (գործատուի ներկայացուցչի) կողմից տարածքային կենտրոն այցելություն և հանդիպում զբաղվածության գործակալին.

3) կապի հաստատում հեռախոսով, ֆաքսով, էլեկտրոնային փոստով և հնարավոր՝ այլ նմանատիպ եղանակներով:

12. Տարածքային կենտրոնը (զբաղվածության գործակալը) գործատուի հետ բուն համագործակցության շրջանակներում՝

1) գործատուին ներկայացնում է տեղեկատվություն տարածքային կենտրոնում հաշվառված՝ աշխատանք փնտրող անձանց մասին (մասնագիտությունը, որակավորումը, աշխատանքային փորձը, այդ թվում՝ մասնագիտական, սեռը, տարիքը, հարմար աշխատանքի վերաբերյալ առաջարկության չափանիշները)՝ ըստ գործատուի ներկայացրած կոնկրետ հետաքրքրությունների և պահանջների.

2) գործատուին ամփոփ ներկայացնում է ծրագրերը և տրամադրում խորհրդատվություն այդ ծրագրերում ընդգրկվելու մեխանիզմների վերաբերյալ (ծրագրի անվանումը, հիմնական նպատակը, գործատուի հնարավորությունը ծրագրի միջոցով առկա և սպասվող թափուր աշխատատեղը համալրելու առումով, ծրագրի շահառուների շրջանակը) և, ըստ գործատուի ներկայացրած հետաքրքրության, մանրամասնում է կոնկրետ ծրագրի կազմակերպման և իրականացման հնարավորություններն ու մեխանիզմները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան.

3) գործատուին ներկայացնում է տեղեկատվություն աշխատաշուկայի վիճակի և միտումների մասին.

4) գործատուից հավաքագրում է տեղեկատվություն առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի, ինչպես նաև սպասվելիք կառուցվածքային փոփոխությունների և այլ միջոցառումների մասին, որոնց հետևանքով կարող են տեղի ունենալ աշխատանքից ազատումներ, այդ թվում՝ զանգվածային, ընդ որում, առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի մասին հայտի օրինակելի ձևը հաստատում է նախարարը.

5) գործատուի հետ քննարկում է թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի մասին տրամադրված տեղեկատվության հրապարակման՝ գործատուի համար ընդունելի տարբերակը, որի արդյունքում նշված տեղեկատվությունը կարող է՝

ա. մուտքագրվել նախարարության տեղեկատվական շտեմարանում և հրապարակվել գործակալության պաշտոնական կայքէջում, զանգվածային լրատվության միջոցներով՝ նշելով գործատուի մասին տեղեկատվությունը,

բ. մուտքագրվել նախարարության տեղեկատվական շտեմարանում և հրապարակվել գործակալության պաշտոնական կայքէջում, զանգվածային լրատվության միջոցներով՝ առանց գործատուի մասին տեղեկատվությունը նշելու,

գ. մուտքագրվել միայն նախարարության տեղեկատվական շտեմարանում՝ տարածքային կենտրոններ այցելած աշխատանք փնտրողներին տրամադրելու նպատակով.

6) գործատուի և համապատասխան աշխատանք փնտրող անձանց հետ վարվող բանակցությունների արդյունքում ձեռք է բերում կոնկրետ պայմանավորվածություններ՝ գործատուի մոտ առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղը համալրելու նպատակով՝

ա. տարածքային կենտրոնի կողմից համապատասխան աշխատանք փնտրող անձին կամ անձանց գործատուի մոտ ուղեգրելու վերաբերյալ, իսկ նման հնարավորության սպառման կամ բացակայության դեպքում՝

բ. աշխատանք փնտրող անձի (անձանց) ներգրավմամբ բնակչության զբաղվածության կարգավորման ամենամյա պետական կոնկրետ ծրագիրը գործատուի հետ համատեղ իրականացնելու վերաբերյալ.

7) գործատուի և աշխատատեղերի կրճատման հիմքով աշխատանքից ազատման իրական ռիսկ ունեցող աշխատողի (աշխատողների) հետ վարվող բանակցությունների արդյունքում գործատուին ներկայացնում է խորհրդատվություն՝ աշխատատեղերի կրճատման հիմնական պատճառների՝ արտադրության ծավալների կրճատման, արտադրության տեխնոլոգիական, կառուցվածքային, աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխությունների հնարավորինս մեղմման և վերացման նպատակով.

8) գործատուների մասին հավաքագրված ու գործատուներից ստացված տեղեկատվությունը վերլուծում է՝ ըստ յուրաքանչյուր գործատուի, որի հիման վրա կատարում է գործատուի հետ համագործակցության ձևերի և հնարավորությունների առաջնահերթությունների համալիր գնահատում.

9) սույն կետի 8-րդ ենթակետում նշված գնահատման արդյունքներով նախանշում է գործատուի հետ համագործակցության վերաբերյալ կոնկրետ առաջարկություն (աշխատանք փնտրող անձին աշխատանքի տեղավորելու նպատակով գործատուի մոտ ուղեգրում, համատեղ ծրագիր)՝ նախապես ընտրված աշխատանք փնտրող անձի (անձանց) ներգրավմամբ, և ներկայացնում է գործատուին՝ հաշվի առնելով հետևյալ հիմնական գործոնները՝

ա. գործատուի մոտ առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղի (աշխատատեղերի) թիվը և դրանց վերաբերյալ գործատուի ներկայացրած պայմաններն ու պահանջները,

բ. առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղը (աշխատատեղերը) տարածքային կենտրոնում հաշվառված՝ աշխատաշուկայում անմրցունակ՝ աշխատանք փնտրող անձանցով համալրելու առաջնային անհրաժեշտությունը,

գ. տարածքային կենտրոնում հաշվառված՝ աշխատանք փնտրող անձանց և գործատուի մոտ առկա թափուր և (կամ) նոր ստեղծվող աշխատատեղերի վերաբերյալ գործատուի ներկայացրած պայմանների համապատասխանության կամ այդ համապատասխանությունը համատեղ կոնկրետ ծրագրի արդյունքում ապահովելու հնարավորությունների ընդհանուր գնահատականները՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված աշխատանք փնտրող անձին «հարմար աշխատանքի» վերաբերյալ առաջարկության չափանիշները,

դ. որպես առաջնային հնարավորություն՝ նախապես ընտրված աշխատանք փնտրող անձին աշխատանքի տեղավորման նպատակով գործատուի մոտ ուղեգրումը և միայն նման հնարավորության սպառման կամ բացակայության պարագայում՝

ե. գործատուի մոտ առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղը (աշխատատեղերը) տարածքային կենտրոնում հաշվառված՝ աշխատանք փնտրող անձով համալրելու նպատակով՝ համատեղ կոնկրետ ծրագրային առաջարկության դիտարկումը.

10) հիմք ընդունելով սույն կետի 9-րդ ենթակետում նշված գործոնները՝ նախապես ընտրում է աշխատանք փնտրող անձին (անձանց) և աշխատանքի տեղավորման նպատակով ուղեգրում է գործատուի մոտ՝ սույն կարգի 13-րդ կետում նկարագրված ընթացակարգով.

11) սույն կետի 10-րդ ենթակետով նախատեսված հնարավորության բացակայության կամ սպառման դեպքում կազմակերպում է տարածքային կենտրոնի, գործատուի և աշխատանք փնտրող անձի միջև եռակողմ բանակցություններ, դրանց արդյունքում գործատուի հետ վերջնական ճշտված համագործակցության վերաբերյալ կոնկրետ առաջարկության հիման վրա կազմում է համապատասխան ծրագրի մասին հայտի նախագիծ և ներկայացնում տարածքային կենտրոնի տնօրենին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

12) գործնականում ապահովում է ծրագրի մասին հայտի հիման վրա տարածքային կենտրոնի, գործատուի և աշխատանք փնտրող անձի միջև կնքված եռակողմ պայմանագրի իրականացումը.

13) ապահովում է գործատուի հետ հետադարձ կապը համատեղ ծրագրի իրականացման ընթացքում և դրա ավարտից հետո՝ հիմք ընդունելով ծրագրի կայուն զբաղվածության ցուցանիշի չափանիշը.

14) սույն կարգի 8-րդ կետի 15-րդ ենթակետում նշված՝ աշխատանքից ազատման իրական ռիսկ ունեցող աշխատողների աշխատանքային հարաբերությունները շարունակելու մասին տեղեկատվությունն ստանում է գործատուից և դրա մասին համապատասխան նշում է կատարում գործատուի գրանցամատյանում:

13. Զբաղվածության գործակալն աշխատանքի տեղավորման նպատակով աշխատանք փնտրող անձին գործատուի մոտ ուղեգրում է հետևյալ ընթացակարգով՝

1) գործատուի ներկայացրած պահանջներին՝ աշխատանք փնտրող անձի մասնագիտության և որակավորման համապատասխանության գնահատում.

2) գործատուի ներկայացրած թափուր աշխատատեղի պայմաններն աշխատանք փնտրող անձին մանրամասն ներկայացնելը և քննարկելը.

3) գործատուի մոտ ուղեգրվող՝ աշխատանք փնտրող անձին առաջարկվող աշխատանքի՝ հարմար աշխատանքի չափանիշներին համապատասխանության գնահատում և դրա մասին իրազեկում աշխատանք փնտրող անձին.

4) աշխատանք փնտրող անձի համաձայնության ստացում.

5) գործատուի և աշխատանք փնտրող անձի հետ ուղեգրման վայրի և ժամկետների վերաբերյալ կոնկրետ պայմանավորվածության ձեռքբերում.

6) աշխատանք փնտրող անձի այցելություն գործատուին (ըստ անհրաժեշտության՝ զբաղվածության գործակալի ուղեկցությամբ).

7) գործատուից ուղեգրման արդյունքների մասին տեղեկատվության ստացում.

8) ուղեգրման և դրա արդյունքների մասին տեղեկատվության մուտքագրում գործատուների գրանցամատյանում:

14. Զբաղվածության գործակալը գործատուի հետ համատեղ ծրագրի իրականացման, ինչպես նաև ուղեգրման արդյունքում գործատուի մոտ աշխատանքի տեղավորված՝ աշխատանք փնտրող անձանց աշխատանքային հարաբերությունները շարունակելու

մասին տեղեկատվությունը պարբերաբար հավաքագրում է գործատուից և այդ տեղեկատվությունն ստանալուց հետո անմիջապես մուտքագրում է գործատուների գրանցամատյանում:

15. Աշխատանքի տեղավորված աշխատանք փնտրող անձի աշխատանքային հարաբերությունները շարունակելու մասին տեղեկատվության ստացման տևողությունը և պարբերականությունը որոշվում են՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ զբաղվածության պետական ծրագրերի մոնիթորինգի ու գնահատման կարգը և ծրագրի կայուն զբաղվածության ցուցանիշի չափանիշը:

16. Զբաղվածության գործակալը գործատուների մասին հավաքագրած ու գործատուներից ստացած տեղեկատվությունը մուտքագրում է նախարարության կողմից վարվող տեղեկատվական համակարգում, գործատուների գրանցամատյանում և պարբերաբար թարմացնում է այն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

17. Գործատուն զանգվածային ազատումների դեպքում դրա մասին տեղեկատվությունը տարածքային կենտրոն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 116-րդ հոդվածով սահմանված դեպքերում և ժամկետներում:

18. Տարածքային կենտրոնը գործատուների հետ կապի հաստատումը, այդ թվում՝ գործատուի փաստացի գործունեության վայր այցելությունը կազմակերպում և իրականացնում է համաձայն նախարարի հաստատած տարեկան պլան-ժամանակացույցի:

19. Գործատուների հետ համագործակցության ամփոփ ցուցանիշները, այդ թվում՝ գործատուներից ստացված թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի, զանգվածային ազատումների մասին տեղեկատվությունը՝ ըստ մարզերի ինքնաշխատ եղանակով արտածվում են նախարարության կողմից վարվող տեղեկատվական համակարգից:

V. ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՎԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԸ

20. Տարածքային կենտրոնը, սույն կարգին համապատասխան, գործատուների հետ համագործակցության շրջանակներում բացում, վարում և պարբերաբար թարմացնում է գործատուների էլեկտրոնային գրանցամատյանը:

21. Գործատուների գրանցամատյանը ներառում է հետևյալ հիմնական տեղեկությունները՝

1) ընդհանուր տեղեկություններ՝

ա. գործատուի գրանցամատյանի համարը,

բ. գործատուի գրանցամատյանի բացման ամսաթիվը,

գ. գործատուի գրանցամատյանի փակման ամսաթիվը (գործատուի գրանցամատյանը փակվում է իրավաբանական անձ հանդիսացող գործատուի լուծարման դեպքում, ինչպես նաև ֆիզիկական անձ հանդիսացող գործատուի գործունեության դադարման դեպքում),

դ. տարածքային կենտրոնի անվանումը,

ե. զբաղվածության գործակալի (գործակալների) անունը, ազգանունը.

2) գործատուի մասին ընդհանուր տեղեկություններ՝

ա. իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող գործատուի անվանումը (անունը, ազգանունը), հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), պետական գրանցման ամսաթիվը, գործատուի (գործատուի ներկայացուցչի) անունը, ազգանունը, իրավաբանական անձի համար՝ նաև կազմակերպաիրավական ձևը,

բ. ֆիզիկական անձ հանդիսացող գործատուի անունը, ազգանունը, անձնագրի կամ նույնականացման քարտի համարը, առաջին անգամ որպես գործատու հանդես գալու ամսաթիվը,

գ. գործատուի աշխատողների թիվը,

դ. գործատուի գործունեության հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը, կայքէջը,

ե. տարածքային կենտրոնի հետ համագործակցության վերաբերյալ գործատուի տեսակետը՝ ունի ցանկություն, հրաժարվել է համագործակցությունից, հնարավոր է ապագա համագործակցությունը,

զ. համագործակցության ցանկության դեպքում՝ գործատուի ակնկալիքները.

3) կապի հաստատման՝ գործատուի համար առավել արդյունավետ եղանակի (եղանակների) վերաբերյալ համապատասխան նշում, այդ թվում՝

ա. զբաղվածության գործակալի կողմից գործատուին այցելություն,

բ. գործատուի (գործատուի ներկայացուցչի) կողմից տարածքային կենտրոն այցելություն,

գ. հեռահար կապի հաստատում՝ հեռախոսով, ֆաքսով, էլեկտրոնային փոստով և հնարավոր այլ նմանատիպ եղանակներով.

4) ծրագրերի, ինչպես նաև տարածքային աշխատաշուկայի վիճակի վերաբերյալ տրամադրված խորհրդատվության արդյունքների մասին ամփոփ տեղեկատվություն (նշվում են տեղեկատվության լրացման և հետագա թարմացման ժամկետները)՝

ա. գործատուի կողմից հետաքրքրության արժանացած ծրագրեր,

բ. նոր աշխատողների ներգրավման հավանական պահանջարկ՝ ըստ թվի, մասնագիտության, որակավորման, աշխատանքային փորձի, սեռի, տարիքի.

5) գործատուի կողմից ներկայացված աշխատատեղերի մասին տեղեկատվություն (նշվում են տեղեկատվության լրացման և հետագա թարմացման ժամկետները)՝

ա. առկա թափուր աշխատատեղերը և նոր ստեղծվող (առավելագույնն առաջիկա երեք ամսվա ընթացքում) աշխատատեղերը,

բ. աշխատատեղերի նախատեսվող կրճատումները (առաջիկա մեկ տարվա ընթացքում)՝ կրճատման որոշակի ժամկետ, կրճատվող աշխատատեղի անվանումը, աշխատատեղերի կրճատման հիմքով աշխատանքից ազատման ենթակա աշխատողի մասնագիտությունը, որակավորումը, սեռը, տարիքը.

6) գործատուի ներկայացրած առկա թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերը տարածքային կենտրոնի կողմից հրապարակման հնարավոր ձևերը՝

ա. գործակալության պաշտոնական կայքէջում տեղադրում՝ առանց գործատուի մասին ընդհանուր տեղեկությունների,

բ. գործակալության պաշտոնական կայքէջում տեղադրում՝ գործատուի մասին ընդհանուր տեղեկությունների հետ միասին,

գ. զանգվածային լրատվության միջոցներով պարբերաբար հրապարակում՝ առանց գործատուի մասին ընդհանուր տեղեկությունների,

դ. զանգվածային լրատվության միջոցներով պարբերաբար հրապարակում՝ գործատուի մասին ընդհանուր տեղեկությունների հետ միասին,

ե. տարածքային կենտրոն այցելած՝ աշխատանք փնտրող անձին այդ տեղեկատվությունը ներկայացնելը.

7) աշխատատեղերի հնարավոր կրճատումների պատճառները՝ յուրաքանչյուրի կանխարգելման ու վերացման վերաբերյալ զբաղվածության գործակալի գործնական առաջարկությունների հետ միասին (նշվում են տեղեկատվության լրացման և հետագա թարմացման ժամկետները)՝

ա. արտադրության ծավալների կրճատում,

բ. արտադրության տեխնոլոգիական, կառուցվածքային, աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխություններ,

գ. գործատուի սնանկացում,

դ. այլ հնարավոր պատճառներ (նշվում է պատճառը).

8) աշխատատեղերի կրճատման հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ գործատուից գրավոր ծանուցում ստացած աշխատողի աշխատանքային հարաբերությունների մասին տեղեկատվությունը, որը գործատուից հավաքագրվում է ծանուցման ժամկետը լրանալուց հետո՝ անմիջապես (նշվում են տեղեկատվության լրացման և հետագա թարմացման ժամկետները)՝

ա. աշխատողի անունը, հայրանունը, ազգանունը,

բ. աշխատանքային հարաբերությունները շարունակվում են՝ համաձայն աշխատանքային պայմանագրի,

գ. աշխատանքային հարաբերությունները շարունակվում են՝ առավել ոչ բարենպաստ աշխատանքային պայմաններով,

դ. աշխատանքային պայմանագիրը լուծվել է աշխատանքի էական պայմանները փոփոխվելու հիմքով,

ե. աշխատանքային պայմանագիրը լուծվել է գործատուի նախաձեռնությամբ.

9) ըստ գործատուի հետ ձեռք բերված նախնական պայմանավորվածության՝ գործատուին ներկայացված համագործակցության կոնկրետ առաջարկությունները (նշվում են տեղեկատվության լրացման և հետագա թարմացման ժամկետները)՝

ա. համապատասխան աշխատանք փնտրող անձի (անձանց) ուղեգրումը գործատուի մոտ (ուղեգրման ժամկետները, ուղեգրվող անձանց թիվը), իսկ նման հնարավորության սպառման կամ բացակայության պարագայում՝

բ. ծրագրի համատեղ իրականացումը՝ նշելով յուրաքանչյուրին առաջարկվող կոնկրետ ծրագրի անվանումը, ծրագրում ընդգրկման ենթակա՝ աշխատանք փնտրող անձանց թիվը, ծրագրի արդյունքում աշխատանքի տեղավորման ենթակա անձանց թիվը.

10) սույն կետի 9-րդ ենթակետի «ա» պարբերությունում նշված առաջարկության վերաբերյալ գործատուի հետ ձեռք բերված կոնկրետ պայմանավորվածության համաձայն՝ զբաղվածության գործակալի կողմից նախապես ընտրված՝ աշխատանք փնտրող անձի՝ գործատուի մոտ ուղեգրումը (նշվում են տեղեկատվության լրացման և հետագա թարմացման ժամկետները)՝

ա. առկա թափուր կամ նոր ստեղծվող կոնկրետ աշխատատեղի համար ուղեգրված աշխատանք փնտրող անձի անունը, հայրանունը, ազգանունը, հաշվառման քարտի համարը,

բ. ըստ յուրաքանչյուր ուղեգրված անձի ուղեգրման արդյունքը՝ գործատուի կողմից մերժում, աշխատանք փնտրող անձի կողմից մերժում (համապատասխան դեպքում առանձին նշվում է՝ «հրաժարվել է իրեն առաջարկված հարմար աշխատանքից»), աշխատանքի տեղավորում.

11) գործատուի, զբաղվածության գործակալի և աշխատանք փնտրող անձի միջև կազմակերպված բանակցությունների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունների հիման վրա տարածքային կենտրոնի, գործատուի և աշխատանք փնտրող անձի միջև կնքված եռակողմ պայմանագրով նախատեսված ծրագրի պայմանները և իրականացման արդյունքները բնութագրող տեղեկատվությունը՝

ա. ծրագրի անվանումը, եռակողմ պայմանագրի համարը, կնքման ամսաթիվը և գործողության ժամկետը,

բ. ծրագրում ընդգրկվող՝ աշխատանք փնտրող անձի անունը, հայրանունը, ազգանունը, զբաղվածության ապահովման անհատական ծրագրի (այսուհետ՝ անհատական ծրագիր) համարը և զբաղվածության կարգավիճակը՝ աշխատանք փնտրող անձ, այդ թվում՝ գործազուրկ, նրանցից՝ հաշմանդամություն ունեցող անձ, աշխատաշուկայում անմրցունակ անձ,

գ. ծրագրի արդյունքում՝ ծրագրում ներգրավված անձանցից աշխատանքի տեղավորման ենթակա անձանց թիվը,

դ. ծրագրի արդյունքում աշխատանքի տեղավորված անձի անունը, հայրանունը, ազգանունը, անհատական ծրագրի համարը և զբաղվածության կարգավիճակը՝ աշխատանք փնտրող անձ, այդ թվում՝ գործազուրկ, նրանցից՝ հաշմանդամություն ունեցող անձ, աշխատաշուկայում անմրցունակ անձ.

12) ծրագրի իրականացման, ինչպես նաև տարածքային կենտրոնի կողմից ուղեգրման արդյունքում գործատուի մոտ աշխատանքի տեղավորված՝ աշխատանք փնտրող անձի աշխատանքային հարաբերությունները շարունակելու մասին տեղեկատվությունը (նշվում են տեղեկատվության լրացման և հետագա թարմացման ժամկետները)՝

ա. աշխատանքի տեղավորված անձի անունը, հայրանունը, ազգանունը, անհատական ծրագրի համարը,

բ. աշխատանքային հարաբերությունները շարունակվում են՝ համաձայն կնքված աշխատանքային պայմանագրի,

գ. աշխատանքային հարաբերությունները շարունակվում են՝ առավել բարենպաստ աշխատանքային պայմաններով,

դ. աշխատանքային հարաբերությունները շարունակվում են՝ ոչ բարենպաստ աշխատանքային պայմաններով,

ե. աշխատանքային պայմանագիրը լուծվել է գործատուի նախաձեռնությամբ,

զ. աշխատանքային պայմանագիրը լուծվել է աշխատողի նախաձեռնությամբ,

է. աշխատանքային պայմանագիրը լուծվել է կողմերի համաձայնությամբ,

ը. աշխատանքային պայմանագիրը լուծվել է աշխատանքի էական պայմանները փոփոխվելու հիմքով,

թ. աշխատանքային պայմանագիրը լուծվել է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված այլ հիմքերով (նշվում է համապատասխան հիմքը՝ հղումով):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 10
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 17-ի N 534 - Ն որոշման

Ձև

Գործատուի անվանումը, հասցեն, հեռախոսահամարը _____
_____
_____

ՈՒՂԵԳԻՐ N

ԳՈՐԾԱՏՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԹԱՓՈՒՐ ԵՎ ՆՈՐ ՍՏԵՂԾՎՈՂ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐՈՂ ԱՆՁԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ

Հարգելի _____
(կազմակերպության ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը)

Ձեր կազմակերպությունում աշխատողների պահանջարկի մասին տեղեկություններին համապատասխան՝ ուղարկվում է _____
_____ -ը՝
(անունը, հայրանունը, ազգանունը)
_____մասնագիտությամբ,
(անվանումը)

զբաղեցնելու համար _____ պաշտոնը:
(անվանումը)

Խնդրում եմ 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել Ձեր կողմից ընդունված որոշման մասին:

_____
(զբաղվածության տարածքային կենտրոնի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը)

ՏՆՕՐԵՆ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Տրվել է -------- ---------- 20 թ.

Կ. Տ.

14_0534.1

_____ զբաղվածության տարածքային
(անվանումը) (ընդգծել) կենտրոնի տնօրենին

ՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղ. _____ -ը N_____ ուղեգրով
(ազգանունը, անունը, հայրանունը)

1) ընդունվել է աշխատանքի 20 թվականի ---------- -----ին,

_____ N_____ 20 թվականի _____ _____.
(աշխատանքի ընդունվելու մասին փաստաթղթի տեսակը) (համարը) (ամսաթիվը)

2) չի ընդունվել աշխատանքի _____:
(պատճառը)

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ
(ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ) _____ _____
(ստորագրությունը (անունը, ազգանունը)

-------- ---------- 20 թ.

Գործատուի ՀՎՀՀ

Կ. Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 11
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 17-ի N 534 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏՄԱՆ ՌԻՍԿ ՈՒՆԵՑՈՂ՝ ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության (այսուհետ՝ գործակալություն) տարածքային կենտրոններում (այսուհետ՝ տարածքային կենտրոն) հաշվառված և մասնագիտական պատրաստման, վերամասնագիտացման ու մասնագիտական որակավորման բարձրացման (այսուհետ՝ մասնագիտական ուսուցում) դասընթացներին մասնակցելու ցանկություն հայտնած գործազուրկների և աշխատանքից ազատման ռիսկ ունեցող՝ աշխատանք փնտրող անձանց (այսուհետ՝ ունկնդիր) մասնագիտական ուսուցման հետ կապված հարաբերությունները:

2. Մասնագիտական ուսուցման նպատակն ունկնդրին աջակցելն է աշխատաշուկայի պահանջներին համապատասխան նոր կարողություններ ու հմտություններ ձեռք բերելու միջոցով հարմար աշխատանքի տեղավորման, աշխատանքից ազատման ռիսկի նվազեցման, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հարցերում:

3. Մասնագիտական ուսուցումը կազմակերպվում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրերին համապատասխան:

4. Մասնագիտական ուսուցումը կազմակերպվում է, երբ՝

1) աշխատաշուկայում բացակայում է ունկնդրի մասնագիտական կրթությանը համապատասխան հարմար աշխատանքը. այս դեպքում կազմակերպվում է վերամասնագիտացման դասընթաց.

2) ունկնդրի մասնագիտական որակավորումը չի համապատասխանում աշխատաշուկայի պահանջներին. այս դեպքում կազմակերպվում է մասնագիտական որակավորման բարձրացման դասընթաց.

3) ունկնդիրը չունի մասնագիտական կրթություն և որակավորում. այս դեպքում կազմակերպվում է նախնական մասնագիտական պատրաստման և արհեստագործական ուսուցման դասընթաց:

5. Մասնագիտական ուսուցումը ֆինանսավորվում է՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին.

2) օրենքով չարգելված այլ միջոցներից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Մասնագիտական ուսուցումն իրականացվում է՝

1) սույն կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքում՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ընտրված կազմակերպության կողմից.

2) սույն կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում՝ այլ միջոցների հաշվին ուսուցումն իրականացնող կազմակերպության կողմից:

7. Հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական ուսուցումն իրականացվում է՝ հաշվի առնելով նախարարության Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության տարածքային մարմինների (վերափորձաքննության բաժին) կողմից կազմված հաշմանդամի վերականգնողական անհատական ծրագիրը:

8. Մասնագիտական ուսուցման դասընթացների տևողությունը չի կարող գերազանցել 3 ամիսը, իսկ սույն կարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետում նշված նախնական մասնագիտական պատրաստման և արհեստագործական ուսուցման դեպքում՝ 6 ամիսը:

9. Ունկնդրին՝ իր բնակության վայրի համայնքից դուրս այլ համայնք (բացառությամբ Երևան քաղաքի վարչական շրջանների) մասնագիտական ուսուցման ուղեգրելու դեպքում փոխհատուցվում են տրանսպորտային ծախսերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 2335-Ն որոշմամբ սահմանված կարգով նախատեսված չափերով:

10. Մասնագիտական ուսուցման դասընթացներում ընդգրկված մեկ ունկնդրի հաշվով կատարվող ծախսը չպետք է գերազանցի զբաղվածության ամենամյա պետական ծրագրերում մեկ անձի համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը:

11. Ունկնդիրը կարող է մեկ տարվա ընթացքում մասնակցել մասնագիտական ուսուցման մեկ դասընթացի, ընդ որում, եթե ունկնդիրների թիվը գերազանցում է տարածքային կենտրոնի համար տվյալ տարվա զբաղվածության ամենամյա պետական ծրագրով նախատեսված անձանց թիվը, ապա դասընթացում ընդգրկվելու նախապատվությունը «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն տրվում է աշխատաշուկայում անմրցունակ անձանց, ավելի վաղ հաշվառվածներին՝ ըստ հաշվառման հերթականության: Նույն անձը կարող է ընդգրկվել մասնագիտական ուսուցման մեկից ավելի դասընթացներում, եթե տվյալ դասընթացում առաջին անգամ ընդգրկվելու ցանկություն հայտնող չի եղել:

12. Եթե ծրագրում ընդգրկվելու ցանկություն ունեցող շահառուների թիվը գերազանցում է տարածքային կենտրոնի՝ տվյալ տարվա զբաղվածության ամենամյա

պետական ծրագրով նախատեսված շահառուների թիվը, ապա ընդգրկվելու նախապատվությունը տրվում է առավել երկար ժամկետով հաշվառված անմրցունակ անձանց:

13. Մասնագիտական ուսուցման ծրագրերի, ուսումնական պլանի, մասնագիտական ուսուցման ձևի ընտրության (խմբային կամ անհատական), դասընթացների իրականացման, ավարտական քննությունների կազմակերպման և վկայականների հանձնման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են մասնագիտական ուսուցում իրականացնող կազմակերպության հետ կնքված պայմանագրով:

II. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ

14. Մասնագիտական ուսուցման դասընթացներին մասնակցելու ցանկություն հայտնած անձանց՝ տարածքային կենտրոնի կողմից մատուցվում են հետևյալ ծառայությունները՝

1) մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ խորհրդատվություն.

2) աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտությունների և տարածքային կենտրոնի կողմից կազմակերպվող մասնագիտական ուսուցման դասընթացների մասին տեղեկությունների տրամադրում:

15. Տարածքային կենտրոնը, հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջարկը և ունկնդրի ցանկությունը, կազմում և գործակալություն է ներկայացնում մասնագիտական ուսուցման կազմակերպման մասին հայտ, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը (այսուհետ՝ նախարար):

16. Գործակալությունն իր իրավասության սահմաններում, տարածքային կենտրոններից ստացված հայտերի հիման վրա, կազմակերպում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով մասնագիտական

ուսուցման ծառայությունների գնման գործընթացի իրականացումը, որի արդյունքում սույն կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետում նշված կազմակերպության հետ կնքվում է համապատասխան պայմանագիր:

17. Գործակալությունը սույն կարգի 16-րդ կետում նշված պայմանագրի պատճենը տրամադրում է տարածքային կենտրոնին:

18. Տարածքային կենտրոնը պայմանագրի պատճենն ստանալուց հետո ունկնդրին ծանոթացնում է մասնագիտական ուսուցման դասընթացի պայմանների, ուսուցում իրականացնող կազմակերպության ներքին կարգապահական կանոնների հետ և տալիս մասնագիտական ուսուցման ուղեգիր, որի ձևը սահմանում է նախարարը:

19. Տարածքային կենտրոնի կողմից մասնագիտական ուսուցման դասընթացին ունկնդրի մասնակցելու վերաբերյալ առաջարկության, այն ընդունելու կամ դրանից հրաժարվելու, ինչպես նաև դրանցից բխող գործազուրկի կարգավիճակի կասեցման և վերականգնման վերաբերյալ նշում է կատարվում աշխատանք փնտրող անձի անհատական ծրագրում:

20. Գործակալությունը մինչև տվյալ տարվա հունվարի 31-ը նախարարության աշխատակազմ է ներկայացնում սույն ծրագրի ծախսերի նախահաշիվները (ըստ տարածքային կենտրոնների կամ ամփոփ):

21. Նախարարության աշխատակազմը գործակալությունից ծախսերի նախահաշիվներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում դրանք սահմանված կարգով հաստատում է և տրամադրում գործակալությանը:

22. Գործակալությունը նախարարության աշխատակազմից ծախսերի հաստատված նախահաշիվներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է դրանց մուտքագրումը «Client Treasury» էլեկտրոնային ծրագրային համակարգում:

III. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻՆ ՎՃԱՐՎՈՂ ԿՐԹԱԹՈՇԱԿԸ

23. Բնակչության զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրերի շրջանակներում մասնագիտական ուսուցման դասընթացներում ընդգրկված գործազուրկներին ուսուցման ամբողջ ժամանակահատվածի ընթացքում տրվում է կրթաթոշակ՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն աշխատավարձի 50 տոկոսի չափով, որի վճարման գործընթացն իրականացնում է տարածքային կենտրոնը:

24. Մասնագիտական ուսուցման դասընթացներում ընդգրկված գործազուրկները բանկային հաշիվ չունենալու դեպքում եռօրյա ժամկետում առևտրային բանկում բացում են բանկային հաշիվ և տարածքային կենտրոն են ներկայացնում հայտարարություն իրենց բանկային հաշվի տվյալների մասին:

25. Մասնագիտական ուսուցման դասընթացներում ընդգրկված անձանց կրթաթոշակը վճարվում է այդ անձանց մասնագիտական ուսուցման գործուղելու օրվանից հաշված յուրաքանչյուր ամսվա համար. ամսվա հաշվարկը կատարվում է ըստ օրացուցային օրերի (այսուհետ՝ ուսումնական ամիս):

26. Կրթաթոշակն անձին տրամադրվում է տվյալ ուսումնական ամսվա ընթացքում նրա՝ ուսուցմանը մասնակցած օրերին համապատասխան, մասնակցության օրերի մասին տեղեկատվությունը տարածքային կենտրոնին է տրամադրվում ուսուցումն իրականացնող կազմակերպության կողմից (այսուհետ՝ կազմակերպություն)՝ յուրաքանչյուր ուսումնական ամսվա վերջին աշխատանքային օրը:

27. Մասնագիտական ուսուցման դասընթացների գործուղված անձանց կրթաթոշակը վճարվում է տարածքային կենտրոնի կողմից գործակալություն ներկայացված հայտի հիման վրա:

IV. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ

28. Սույն կարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետում նշված կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) գրավոր դիմում է գործակալություն՝ ներկայացնելով ուսումնական ծրագիրը, դրա իրականացման պայմանները և դասընթացներում ընդգրկվողների թիվը:

29. Գործակալությունը կազմակերպության հետ նախապես քննարկում է մասնագիտական ուսուցման կազմակերպման հետ կապված հարցերը և նախարարություն է ներկայացնում առաջարկություն քննարկում կազմակերպելու և պայմանագիր կնքելու վերաբերյալ, իսկ նախարարությունը կազմակերպության հետ քննարկում է մասնագիտական ուսուցման կազմակերպման հետ կապված հարցերը և կնքում է պայմանագիր, որի տեխնիկական բնութագրի պատճենը գործակալությունը տրամադրում է տարածքային կենտրոնին:

30. Տարածքային կենտրոնը կազմակերպության կողմից իրականացվող դասընթացին մասնակցելու ցանկություն հայտնած ունկնդրին ծանոթացնում է մասնագիտական ուսուցման դասընթացի պայմանների, ուսուցում իրականացնող կազմակերպության ներքին կարգապահական կանոնների հետ և տալիս մասնագիտական ուսուցման՝ սույն կարգի 18-րդ կետում նշված ուղեգիրը:

31. Դասընթացն սկսվելուց հետո մինչև յուրաքանչյուր հաջորդ ամսվա 5-ը կազմակերպությունը տարածքային կենտրոն է ներկայացնում տեղեկանք նախորդ ամսվա ընթացքում դասընթացին ունկնդիրների մասնակցության մասին:

V. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

32. Մասնագիտական ուսուցման ծրագրի մոնիթորինգն ու գնահատումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Մասնագիտական ուսուցման ծրագրի վերջնական գնահատման համար հիմք հանդիսացող կայուն զբաղվածության չափանիշը հաշվարկվում է հետևյալ ձևով. ուսուցումն ավարտելուց հետո 3 ամսվա ընթացքում աշխատանքի տեղավորված և մեկ տարվա ընթացքում աշխատանքից ազատված անձանց թվի տարբերությունը հարաբերվում է մասնագիտական ուսուցումն ավարտածների ընդհանուր թվին և արտահայտվում է տոկոսով: Աշխատանքից ազատվածների թվից հանվում է այն անձանց թիվը, որոնք աշխատանքից ազատվելուց հետո տասնօրյա ժամկետում տեղավորվել են աշխատանքի: Ընդ որում, մասնագիտական ուսուցման ծրագրի կայուն զբաղվածության համապատասխան չափորոշիչը ներառվում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 12
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 17-ի N 534 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության (այսուհետ՝ գործակալություն) տարածքային կենտրոններում (այսուհետ՝ տարածքային կենտրոն) հաշվառված՝ ձեռք բերած մասնագիտությամբ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող գործազուրկների (այսուհետ՝ գործազուրկ)՝ գործատուի մոտ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցություն տրամադրելու ծրագրի հետ (այսուհետ՝ ծրագիր) կապված հարաբերությունները:

2. Ծրագրի նպատակը ձեռք բերած մասնագիտությամբ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործող գործազուրկի՝ իր մասնագիտական որակավորմանը համապատասխան մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու, աշխատաշուկայում առավել մրցունակ դառնալու և հարմար աշխատանքի տեղավորվելու համար ցուցաբերվող աջակցության միջոցով կայուն զբաղվածության ապահովումն է:

3. Գործազուրկը մեկ անգամ կարող է մասնակցել ծրագրին՝ առավելագույնը 3 ամիս տևողությամբ, մասնագիտական կրթություն և որակավորում ստանալուց հետո՝ առավելագույնը 3 տարվա ընթացքում:

4. Եթե գործազուրկների թիվը գերազանցում է տարածքային կենտրոնի համար տվյալ տարվա զբաղվածության ամենամյա պետական ծրագրով նախատեսված շահառուների թիվը, ապա ծրագրում ընդգրկվելու նախապատվությունը տրվում է առավել պահանջարկ ունեցող մասնագիտությամբ գործազուրկներին, իսկ նույն մասնագիտությամբ գործազուրկներից՝ ավելի վաղ հաշվառվածներին՝ ըստ հաշվառման հերթականության:

II. ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

5. Ծրագիրը ֆինանսավորվում է՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին.

2) օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Ծրագիրն իրականացվում է տարածքային կենտրոնի կողմից վարվող համապատասխան բանակցությունների արդյունքում ընտրված գործատուի կողմից, որի արդյունքում գործատուի, գործազուրկի և գործազուրկին հաշվառած տարածքային կենտրոնի միջև կնքվում է ծրագրի կազմակերպման մասին եռակողմ պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր), որի օրինակելի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը (այսուհետ՝ նախարար):

7. Սույն կարգի 6-րդ կետում նշված պայմանագիրը կնքելուց հետո գործատուն գործազուրկի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Ծրագրի ամբողջ ժամանակահատվածի ընթացքում՝ սույն կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետում նշված միջոցներից վճարվում է՝

1) գործազուրկին աշխատավարձ՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափով.

2) գործատուի մոտ աշխատանքային փորձի ձեռքբերման գործընթացը կազմակերպող մասնագետին՝ նրա նախորդ տարվա միջին ամսական աշխատավարձի 20 տոկոսի չափով հավելում, բայց ոչ ավելի, քան սույն կետում նշված նվազագույն ամսական աշխատավարձի չափը.

3) գործատուին գումար՝ գործազուրկի աշխատավարձից հաշվարկվող եկամտային հարկը փոխհատուցելու համար:

9. Ծրագիրը սույն կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետում նշված միջոցներով ֆինանսավորվելու դեպքում՝ գործատուին տրվող փոխհատուցման չափը չի կարող փոքր լինել սույն կարգի 8-րդ կետում նշված միջոցների չափից:

10. Տարածքային կենտրոնը գրանցում է գործազուրկի մասնագիտության (պաշտոնի) անվանումը՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 872-Ն հրամանով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության՝ Աշխատողների մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների դասակարգչի կոդերին համապատասխան, ուղարկում անհատական տվյալների համադրման (նախարարության կողմից վարվող համապատասխան տեղեկատվական շտեմարանի միջոցով)՝ մասնագիտական աշխատանքային փորձի բացակայությունը ճշտելու նպատակով:

11. Տարածքային կենտրոնը սույն կարգի 6-րդ կետում նշված պայմանագրի պատճենը և գործազուրկների ցուցակը պայմանագիրը կնքելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է գործակալություն: Ընդ որում, գործազուրկների ցուցակում նշվում են գործազուրկի՝

1) անունը և ազգանունը.

2) անձնագրի սերիան և համարը.

3) կրթության մասին վկայականը տալու տարեթիվը.

4) մասնագիտության՝ սույն կարգի 10-րդ կետում նշված կոդը.

5) հանրային ծառայությունների համարանիշը կամ բնակչության պետական ռեգիստր վարող մարմնի կողմից գործազուրկին տրամադրված հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքը, իսկ դրանց բացակայության դեպքում՝ սոցիալական ապահովության քարտը:

12. Այն դեպքում, երբ գործազուրկն օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա սույն կարգի 11-րդ կետի 2-րդ ենթակետում նշված տվյալների փոխարեն ցուցակում լրացվում են օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքը հաստատող փաստաթղթի (կացության քարտի) սերիան ու համարը, իսկ փախստականի կարգավիճակ ունեցող անձի համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի սերիան ու համարը:

13. Տարածքային կենտրոնները գործակալություն են ներկայացնում ծրագրի համար անհրաժեշտ միջոցների ֆինանսավորման մասին հայտ-պահանջագրերը՝ նախարարի հաստատած ձևին համապատասխան:

14. Գործակալությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում ծրագրի բաշխումն ըստ տարածքային կենտրոնների հաստատելուց հետո կազմում և նախարարության աշխատակազմի հաստատմանն է ներկայացնում ըստ տարածքային կենտրոնների ծախսերի նախահաշիվները:

15. Նախարարության աշխատակազմը գործակալությունից ըստ տարածքային կենտրոնների ծախսերի նախահաշիվներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում դրանք սահմանված կարգով հաստատում է և տրամադրում գործակալությանը:

16. Գործակալությունը նախարարության աշխատակազմից ծախսերի հաստատված նախահաշիվներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է դրանց մուտքագրումը «Client Treasury» էլեկտրոնային ծրագրային համակարգում:

17. Տարածքային կենտրոնը ծրագրի դիմաց փոխհատուցման ենթակա միջոցները ծրագրի իրականացման նպատակով կնքված պայմանագրի կողմ հանդիսացող գործատուի բանկային հաշվին փոխանցելու համար՝ պայմանագրի կողմ հանդիսացող գործատուի կողմից ծառայությունների մատուցման մասին պայմանագրով նախա-տեսված՝ կատարած վճարումների մասին տեղեկությունները (վճարման ցուցակների պատճեններով կամ տեղեկանքով), մասնագիտական փորձի տրամադրման ընթացքում գործազուրկի հաճախումների մասին տեղեկատվությունն ստանալուց և հաստատելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում կազմում և իրեն սպասարկող տեղական գանձապետական բաժանմունք է ներկայացնում պարտավորության ձևավորման համար սահմանված փաստաթղթերի փաթեթը:

18. Ծրագիրն սկսելուց հետո մինչև յուրաքանչյուր հաջորդ ամսվա 5-ը գործատուն տարածքային կենտրոն է ներկայացնում տեղեկանք նախորդ ամսվա ընթացքում ծրագրին գործազուրկների մասնակցության մասին:

19. Սույն կարգի պահանջների խախտմամբ տրամադրված ֆինանսական միջոցները ենթակա են վերադարձման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Սույն կարգի 6-րդ կետում նշված պայմանագիրը ժամկետից շուտ (բացառությամբ գործազուրկի՝ ծրագրից հեռացման կամ աշխատանքի տեղավորվելու դեպքերի) դադարեցվելու կամ պայմանագրով նախատեսված՝ գործազուրկին աշխատավարձ չվճարելու դեպքում գործատուի կողմից վերադարձվում են պայմանագրով նախատեսված միջոցները:

III. ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

20. Տվյալ տարվա ընթացքում իրականացվելիք ծրագրի մասին տեղեկատվությունն արտացոլվում է գործակալության պաշտոնական կայքէջում և նախարարության կողմից վարվող տեղեկատվական շտեմարանում:

21. Տարածքային կենտրոնը տեղեկատվությունը տեղադրում է իր գտնվելու վայրում՝ գործազուրկի համար տեսանելի տեղում, իսկ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնում տեղակայված լինելու դեպքում՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի միասնական ընդունարանում:

22. Ծրագրում ընդգրկվելու ցանկություն հայտնած անձանց տարածքային կենտրոնի կողմից տրամադրվում է ծրագրի պայմանների վերաբերյալ խորհրդատվություն:

23. Ծրագրի մոնիթորինգն ու գնահատումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Ծրագրի վերջնական գնահատման համար հիմք հանդիսացող կայուն զբաղվածության չափանիշը հաշվարկվում է հետևյալ ձևով. ծրագիրն ավարտելուց հետո 3 ամսվա ընթացքում աշխատանքի տեղավորված և մեկ տարվա ընթացքում աշխատանքից ազատված անձանց թվի տարբերությունը հարաբերվում է ծրագրում ընդգրկվածների ընդհանուր թվին և արտահայտվում տոկոսով: Աշխատանքից ազատվածների թվից հանվում է այն անձանց թիվը, ովքեր աշխատանքից ազատվելուց հետո տասնօրյա ժամկետում տեղավորվել են աշխատանքի: Ընդ որում, ծրագրի կայուն զբաղվածության համապատասխան չափորոշիչը ներառվում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 13
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 17-ի N 534 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԳՈՐԾԱՁՈՒՐԿԻՆ ԱՅԼ ՎԱՅՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության (այսուհետ՝ գործակալություն) տարածքային կենտրոնների (այսուհետ՝ տարածքային կենտրոն) առաջարկությամբ այլ վայրում գործազուրկներին աշխատանքի տեղավորման աջակցության (այսուհետ՝ ծրագիր) տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Ծրագրի նպատակն աշխատուժի ներքին տեղաշարժի կարգավորման միջոցով Հայաստանի Հանրապետության մարզերում (բացառությամբ Երևան քաղաքի), մասնավորապես, գյուղական բնակավայրերում և սահմանամերձ տարածաշրջաններում շարունակաբար չլրացվող թափուր աշխատատեղերի համալրումն ու կայուն զբաղվածության ապահովումն է:

3. Սույն կարգի իմաստով՝ այլ վայրում աշխատանքի տեղավորումը տարածքային կենտրոնի առաջարկությամբ գործազուրկի՝ բնակության վայրից առնվազն 30 կիլոմետր հեռավորությամբ բնակավայրում աշխատանքի տեղավորումն է:

4. Ծրագիրը ֆինանսավորվում է՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին.

2) օրենքով չարգելված այլ աղբյուրներից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Գործազուրկը ծրագրում կարող է ընդգրկվել մեկ անգամ՝ առնվազն երկու տարի ժամկետով:

6. Ծրագրի շրջանակներում թափուր աշխատատեղը գործազուրկին կարող է առաջարկվել միայն այն դեպքում, եթե տարածքային կենտրոնում տվյալ աշխատատեղի մասին տեղեկատվությունն ստացվելուց հետո այն առնվազն մեկ ամիս չի համալրվել:

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Յուրաքանչյուր ամիս տեղեկատվական շտեմարանից ինքնաշխատ եղանակով արտածվում է առնվազն մեկ ամիս թափուր մնացած աշխատատեղերի մասին տեղեկատվությունը և նույն եղանակով տեղադրվում ծրագրի էլեկտրոնային գրանցամատյանում և գործակալության կայքէջում:

8. Տարածքային կենտրոնը յուրաքանչյուր ամիս տարածքային կենտրոնի վարչական շենքի տեսանելի վայրում տեղադրում է առնվազն մեկ ամիս թափուր մնացած աշխատատեղերի մասին տեղեկատվությունը՝ նշելով գործատուի հասցեն, աշխատանքի բնույթը, պահանջվող մասնագիտական որակավորումը, աշխատանքի պայմանները, աշխատաժամանակը և աշխատավարձի չափը:

9. Ծրագրում ընդգրկվելու ցանկություն հայտնած գործազուրկին տարածքային կենտրոնի կողմից տրամադրվում է խորհրդատվություն այլ վայրում առկա թափուր աշխատատեղերի, ծրագրով նախատեսված աջակցության չափի և տրամադրման պայմանների վերաբերյալ:

10. Ծրագրում ընդգրկվելու ցանկություն հայտնած գործազուրկը գրավոր դիմում է տարածքային կենտրոն՝ նշելով մարզի, համայնքի, գործատուի և թափուր աշխատատեղի անվանումները:

11. Եթե գործազուրկին առաջարկվող աշխատանքը գտնվում է գործազուրկին հաշվառած տարածքային կենտրոնի սպասարկման տարածքում, ապա տվյալ տարածքային կենտրոնի տնօրենը գործատուի հետ քննարկում է թափուր աշխատատեղը գործազուրկով համալրելու, գործատուի, գործազուրկի և տարածքային կենտրոնի հետ եռակողմ պայմանագիր կնքելու հետ կապված հարաբերությունները:

12. Եթե գործազուրկին առաջարկվող աշխատանքը գտնվում է գործազուրկին հաշվառած տարածքային կենտրոնի սպասարկման տարածքից դուրս գտնվող համայնքում, ապա տարածքային կենտրոնը գործազուրկի դիմումի պատճենը և անհատական ծրագրի (հաշվառման քարտի) քաղվածքը՝ կից գրությամբ ուղարկում է տվյալ գործատուին սպասարկող տարածքային կենտրոն: Վերջինս գործատուի մոտ առկա թափուր աշխատատեղն այլ համայնքի գործազուրկով համալրելու, գործատուի, գործազուրկի և տարածքային կենտրոնի հետ եռակողմ պայմանագիր կնքելու հետ կապված հարցերը քննարկում է գործատուի հետ: Տարածքային կենտրոնը քննարկման արդյունքների մասին եռօրյա ժամկետում տեղեկատվություն է տրամադրում իրեն դիմած տարածքային կենտրոնին:

13. Թափուր աշխատատեղը գործազուրկով համալրելու և առնվազն 2 տարի տվյալ գործատուի մոտ աշխատելու հարցում տարածքային կենտրոնի և գործատուի միջև համաձայնություն ձեռք բերվելու դեպքում՝ գործազուրկի, գործատուի և գործազուրկին հաշվառած տարածքային կենտրոնի միջև կնքվում է թափուր աշխատատեղը համալրելու մասին եռակողմ պայմանագիր, որի օրինակելի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը

(այսուհետ՝ նախարար), ընդ որում, գործազուրկին սեզոնային աշխատանքով ապահովելու դեպքում յուրաքանչյուր տարվա ընթացքում աշխատած ամիսների թիվը գումարվում է և պետք է կազմի առնվազն 24 ամիս:

14. Սույն կարգի 13-րդ կետում նշված պայմանագիրը կնքելուց հետո գործատուն գործազուրկի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

III. ԳՈՐԾԱԶՈՒՐԿԻՆ ԱՅԼ ՎԱՅՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

15. Այլ վայրում աշխատանքի տեղավորման դեպքում՝ գործազուրկին և նրա հետ մեկնող ընտանիքի անդամներին հատուցվում են՝

1) իր և իր ընտանիքի անդամների տեղափոխման տրանսպորտային ծախսերը՝ միայն միկրոավտոբուսային երթուղի լինելու դեպքում՝ միկրոավտոբուսային երթուղիների համար սահմանված սակագնի չափով, իսկ միկրոավտոբուսային և ավտոբուսային երթուղիներ լինելու դեպքում՝ ավտոբուսային երթուղիների համար սահմանված սակագնի չափով.

2) իր և իր ընտանիքի անդամների անհրաժեշտ գույքի տեղափոխման տրանսպորտային ծախսերը՝ 30-50 կիլոմետր ճանապարհի համար՝ 10000 դրամ, 50 կիլոմետրից ավելի յուրաքանչյուր 50 կիլոմետրի համար՝ 8000 դրամ, բայց ոչ ավելի, քան 50000 դրամը:

16. Այլ վայրում աշխատանքի տեղավորման դեպքում՝ գործազուրկին տրվում է՝

1) միանվագ ֆինանսական աջակցություն՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված ամսական աշխատավարձի եռապատիկի չափով.

2) մեկ տարվա ընթացքում 4 անգամ մշտական բնակավայր այցելելու համար տրանսպորտային ծախս՝ միկրոավտոբուսային երթուղի լինելու դեպքում՝ միկրոավտո-

բուսային երթուղիների համար սահմանված սակագնի չափով, իսկ միկրոավտոբուսային և ավտոբուսային երթուղիներ լինելու դեպքում՝ ավտոբուսային երթուղիների համար սահմանված սակագնի չափով.

3) ամսական գումար՝ բնակարանային վարձի և կոմունալ ծախսերի համար՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված ամսական աշխատավարձի չափով, 2 տարի ժամկետով.

4) աշխատավարձի հավելում՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի 50 տոկոսից մինչև կրկնապատիկի չափով, վեց ամիս ժամկետով, հաշվի առնելով թափուր աշխատատեղերի՝ ըստ մասնագիտությունների լրացման առաջնահերթությունները, ընդ որում, ըստ մասնագիտությունների աշխատավարձի հավելման չափերը սահմանում է նախարարը:

IV. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

17. Ծրագրում ընդգրկված անձը սույն կարգի 13-րդ և 14-րդ կետերում նշված պայմանագրերի կնքումից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում առևտրային բանկում բացում է բանկային հաշիվ և իրեն հաշվառած տարածքային կենտրոն է ներկայացնում հայտարարություն նոր բնակության վայրի հասցեի և բանկային հաշվի տվյալների մասին:

18. Տարածքային կենտրոնը սույն կարգի 17-րդ կետում նշված հայտարարության հիման վրա կազմում և 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ կից գրությամբ գործակալություն է ներկայացնում ֆինանսավորման մասին հայտ-պահանջագիրը, որի

ձևը հաստատում է նախարարը: Կից գրության մեջ նշվում են տվյալ անձին ֆինանսական միջոցներ տրամադրելու հիմնավորումը, ինչպես նաև բանկային հաշվի համարը:

19. Գործակալությունը մինչև տվյալ տարվա հունվարի 31-ը նախարարության աշխատակազմ է ներկայացնում ծրագրի ծախսերի նախահաշիվները (ըստ տարածքային կենտրոնների կամ ամփոփ):

20. Նախարարության աշխատակազմը գործակալությունից ծախսերի նախահաշիվներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում դրանք սահմանված կարգով հաստատում է և տրամադրում գործակալությանը:

21. Գործակալությունը նախարարության աշխատակազմից ծախսերի հաստատված նախահաշիվներն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովում է դրանց մուտքագրումը «Client Treasury» էլեկտրոնային ծրագրային համակարգում:

22. Սույն կարգի պահանջների խախտմամբ տրամադրված ֆինանսական միջոցները ենթակա են վերադարձման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

23. Այլ վայրում աշխատանքի տեղավորման դեպքում՝ գործազուրկին հատուցված նյութական ծախսերը ենթակա են վերադարձման՝

1) գործատուի կողմից, եթե գործատուի և գործազուրկի միջև կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվել է գործատուի նախաձեռնությամբ՝ աշխատանքային պայմանագիրը կնքելուց հետո երկու տարվա ընթացքում.

2) գործազուրկի կողմից, եթե պայմանագիրը լուծվել է գործազուրկի նախաձեռնությամբ՝ պայմանագիրը կնքելուց հետո երկու տարվա ընթացքում.

3) գործատուի և գործազուրկի կողմից հավասարապես, եթե աշխատանքային պայմանագիրը լուծվել է կողմերի համաձայնությամբ՝ պայմանագիրը կնքելուց հետո երկու տարվա ընթացքում:

24. Ծրագրի մոնիթորինգն ու գնահատումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Ծրագրի վերջնական գնահատման համար հիմք հանդիսացող կայուն զբաղվածության չափանիշը հաշվարկվում է հետևյալ ձևով. ծրագրի արդյունքում աշխատանքի տեղավորվածների և ծրագիրն ավարտելուց հետո մեկ տարվա ընթացքում աշխատանքից ազատվածների թվերի տարբերությունը հարաբերվում է ծրագրում ընդգրկված շահառուների ընդհանուր թվին և արտահայտվում տոկոսով: Ընդ որում, ծրագրի կայուն զբաղվածության համապատասխան չափորոշիչը ներառվում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԻ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 14
ՀՀ կառավարության 2014 թվականի
ապրիլի 17-ի N 534 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ ԳՈՐԾԱԶՈՒՐԿԻ ԱՆՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՇԱՐԿՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնների կողմից (այսուհետ՝ տարածքային կենտրոն) աշխատաշուկայում գործազուրկի անմրցունակության որոշարկման հետ կապված հարաբերությունները:

2. Աշխատաշուկայում գործազուրկին անմրցունակ ճանաչելու պայմաններն են՝

1) անձի հաշմանդամություն ունենալու հանգամանքը՝ ըստ հաշմանդամություն ունեցող անձին նախարարության աշխատակազմի բժշկասոցիալական փորձաքննության գործակալության տարածքային մարմնի կողմից տրված՝ հաշմանդամության փաստը հավաստող տեղեկանքի՝

ա. անձն ունի 1-ին խմբի հաշմանդամություն,

բ. անձն ունի 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամություն կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ.

2) անձի սոցիալական կարգավիճակը՝ հետևյալ հանգամանքներով պայմանավորված՝

ա. ընտանիքը հաշվառված է սոցիալապես անապահով ընտանիքների անապահովության գնահատման համակարգում (անհրաժեշտ տեղեկատվությունը տարածքային կենտրոնի կողմից ստացվում է էլեկտրոնային եղանակով՝ նախարարության կողմից

ձևավորված և վարվող համապատասխան տեղեկատվական շտեմարանից, կամ անձը ներկայացնում է համապատասխան տեղեկանք),

բ. ընտանիքն ստանում է ընտանեկան նպաստ (անհրաժեշտ տեղեկատվությունը տարածքային կենտրոնի կողմից ստացվում է էլեկտրոնային եղանակով՝ նախարարության կողմից ձևավորված և վարվող համապատասխան տեղեկատվական շտեմարանից, կամ անձը ներկայացնում է համապատասխան տեղեկանք),

գ. վերադարձել է ազատազրկման վայրերից կամ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառող հիմնարկներից և վերադառնալուց հետո վեց ամսվա ընթացքում հաշվառվել է տարածքային կենտրոնում,

դ. հաշվառված է արտահիվանդանոցային նարկոլոգիական ծառայություններ մատուցող բժշկական հաստատություններում և գտնվում է դադարի (ռեմիսիայի) շրջանում,

ե. թրաֆիքինգի զոհ է.

3) անձի տարիքը՝

ա. գտնվում է 16-30 տարիքային խմբում,

բ. գտնվում է 31-63 տարիքային խմբում.

4) անձի՝ գործազուրկի կարգավիճակում գտնվելու ժամանակահատվածը՝

ա. երեք ամսվանից մինչև մեկ տարի,

բ. մեկ տարվանից ավելի.

5) անձի բնակության վայրը՝

ա. սահմանամերձ, գյուղական,

բ. սահմանամերձ, քաղաքային,

գ. լեռնային կամ բարձր լեռնային, գյուղական,

դ. լեռնային կամ բարձր լեռնային, քաղաքային.

6) անձի փախստական լինելու հանգամանքը և այդ կարգավիճակում գտնվելու ժամանակահատվածը՝

ա. երեք ամսվանից մինչև մեկ տարի,

բ. մեկ տարվանից ավելի.

7) անձի արտագնա աշխատանքի մեկնելու ռիսկը՝

ա. վերադարձել է արտերկրից, սակայն վերադառնալուց հետո մեկ տարվա ընթացքում չի կարողացել դառնալ զբաղված,

բ. վերջին երեք տարվա ընթացքում մեկից ավելի անգամ մեկնել է արտերկիր և յուրաքանչյուր անգամ մեկնման երկրում բնակվել է մեկ ամսվանից ավելի,

գ. վերջին երեք տարվա ընթացքում մեկ տարվանից ավելի բնակվել է արտերկրում.

8) անձի՝ առաջին անգամ աշխատաշուկա մուտք գործելու հանգամանքը՝

ա. նախկինում չի աշխատել կամ աշխատել է մինչև մեկ ամիս տևողությամբ,

բ. նախկինում չի աշխատել իր մասնագիտությամբ (որակավորմամբ) կամ իր մասնագիտությամբ (որակավորմամբ) աշխատել է մինչև մեկ ամիս տևողությամբ.

9) անձի՝ աշխատանք գտնելու կամ մասնագիտական ուսուցման ծրագրերում ընդգրկվելու հնարավորությունները՝

ա. չունի մասնագիտություն (որակավորում) և տարածքային կենտրոնում գրավոր հայտարարել է, որ ընտանեկան վիճակից և (կամ) անձնական հանգամանքներով պայմանավորված՝ չունի մասնագիտական ուսուցման ծրագրերում ընդգրկվելու հնարավորություն,

բ. ունի մասնագիտություն (որակավորում), սակայն տարածքային կենտրոնում հաշվառվելուց հետո երեք ամսվա ընթացքում աշխատաշուկայում համապատասխան պահանջարկի բացակայության դեպքում կենտրոնին չի հաջողվել նրան տեղավորել

հարմար աշխատանքի՝ անձի մասնագիտական կրթությանը և որակավորմանը համապատասխան.

10) անձը խնամում է իր՝ մինչև երեք տարեկան երեխային.

11) անձը վերադարձել է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից և վերադառնալուց հետո վեց ամսվա ընթացքում հաշվառվել է կենտրոնում:

3. Սույն կարգի 2-րդ կետով նախատեսված՝ աշխատաշուկայում գործազուրկին անմրցունակ ճանաչելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը հավաստող տեղեկանքները և այլ փաստաթղթեր տարածքային կենտրոն են ներկայացվում գործազուրկի կողմից՝ բացառությամբ այն տեղեկատվության, որն արդեն իսկ առկա է տարածքային կենտրոնում կամ նախարարության կողմից ձևավորված և վարվող համապատասխան տեղեկատվական շտեմարաններում:

4. Սույն կարգի 5-րդ կետով սահմանված դեպքերում՝ գործազուրկը ճանաչվում է անմրցունակ, և տարածքային կենտրոնի կողմից համապատասխան նշում է կատարվում գործազուրկի զբաղվածության ապահովման անհատական ծրագրում սույն կարգի 3-րդ կետով նախատեսված տեղեկատվությունը գործազուրկի կողմից տարածքային կենտրոն ներկայացվելու օրվանից, և շարունակում է համարվել աշխատաշուկայում անմրցունակ, քանի դեռ գործազուրկի համար առկա են համապատասխան պայմաններ:

5. Գործազուրկը ճանաչվում է աշխատաշուկայում անմրցունակ, եթե միաժամանակ առկա են սույն կարգի 2-րդ կետով նախատեսված հետևյալ պայմանները՝

1) անձն ունի 1-ին խմբի հաշմանդամություն.

2) անձն ունի 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամություն կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ և վերադարձել է ազատազրկման վայրերից կամ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառող հիմնարկներից և վերադառնալուց հետո վեց ամսվա ընթացքում հաշվառվել է տարածքային կենտրոնում.

3) անձն ունի 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամություն կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ և հաշվառված է արտահիվանդանոցային նարկոլոգիական ծառայություններ մատուցող բժշկական հաստատություններում և գտնվում է դադարի (ռեմիսիայի) շրջանում.

4) անձն ունի 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամություն կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ և թրաֆիքինգի զոհ է.

5) անձն ունի 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամություն կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ և գտնվում է 16-30 տարիքային խմբում.

6) անձն ունի 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամություն կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ և երեք ամսվանից ավելի գտնվում է գործազուրկի կարգավիճակում.

7) անձի ընտանիքը հաշվառված է սոցիալապես անապահով ընտանիքների անապահովության գնահատման համակարգում, և անձը գտնվում է 16-30 տարիքային խմբում.

8) անձի ընտանիքը հաշվառված է սոցիալապես անապահով ընտանիքների անապահովության գնահատման համակարգում, և անձը մեկ տարվանից ավելի գտնվում է գործազուրկի կարգավիճակում.

9) անձի ընտանիքն ստանում է ընտանեկան նպաստ.

10) անձը վերադարձել է ազատազրկման վայրերից կամ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառող հիմնարկներից ու վերադառնալուց հետո վեց ամսվա ընթացքում հաշվառվել է տարածքային կենտրոնում և երեք ամսվանից ավելի գտնվում է գործազուրկի կարգավիճակում.

11) անձը հաշվառված է արտահիվանդանոցային նարկոլոգիական ծառայություններ մատուցող բժշկական հաստատություններում, գտնվում է դադարի (ռեմիսիայի) շրջանում և երեք ամսվանից ավելի գտնվում է գործազուրկի կարգավիճակում.

12) անձը թրաֆիքինգի զոհ է և գտնվում է 16-30 տարիքային խմբում.

13) անձը թրաֆիքինգի զոհ է և երեք ամսվանից ավելի գտնվում է գործազուրկի կարգավիճակում.

14) անձը փախստական է և երեք ամսվանից ավելի գտնվում է գործազուրկի կարգավիճակում.

15) անձը 16-30 տարիքային խմբում է և երեք ամսվանից ավելի գտնվում է գործազուրկի կարգավիճակում.

16) անձը 31-63 տարիքային խմբում է և մեկ տարվանից ավելի գտնվում է գործազուրկի կարգավիճակում.

17) անձը բնակվում է կամ սահմանամերձ, գյուղական կամ սահմանամերձ, քաղաքային կամ լեռնային կամ բարձր լեռնային, գյուղական կամ լեռնային կամ բարձր լեռնային, քաղաքային վայրերում.

18) անձը վերադարձել է արտերկրից, սակայն վերադառնալուց հետո մեկ տարվա ընթացքում չի կարողացել դառնալ զբաղված կամ վերջին երեք տարվա ընթացքում մեկից ավելի անգամ մեկնել է արտերկիր և յուրաքանչյուր անգամ մեկնման երկրում բնակվել է մեկ ամսվանից ավելի կամ վերջին երեք տարվա ընթացքում մեկ տարվանից ավելի բնակվել է արտերկրում.

19) անձը նախկինում չի աշխատել կամ աշխատել է մինչև մեկ ամիս տևողությամբ կամ նախկինում չի աշխատել իր մասնագիտությամբ (որակավորմամբ) կամ իր մասնագիտությամբ (որակավորմամբ) աշխատել է մինչև մեկ ամիս տևողությամբ.

20) անձը չունի մասնագիտություն (որակավորում) և տարածքային կենտրոնում գրավոր հայտարարել է, որ, ընտանեկան վիճակով և (կամ) անձնական հանգամանքներով պայմանավորված, չունի մասնագիտական ուսուցման ծրագրերում ընդգրկվելու հնարավորություն կամ ունի մասնագիտություն (որակավորում), սակայն տարածքային կենտրոնում հաշվառվելուց հետո երեք ամսվա ընթացքում աշխատաշուկայում համապատասխան

պահանջարկի բացակայության դեպքում կենտրոնին չի հաջողվել նրան տեղավորել հարմար աշխատանքի՝ անձի մասնագիտական կրթությանը և որակավորմանը համապատասխան.

21) անձը խնամում է իր՝ մինչև երեք տարեկան երեխային.

22) անձը վերադարձել է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից և վերադառնալուց հետո վեց ամսվա ընթացքում հաշվառվել է կենտրոնում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ